«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ և ՍԱՆՀԻԳԵՆԻԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/06(1)»

ք. Գավառ «26» ապրիլի 2018թ.

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Պրովայդեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 60 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 60 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 318.085 (երեք հարյուր տասնութ հազար ութսունհինգ) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից

կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի

մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Գավառի պետական համալսարան»	<<Պրովայդեր >>ՍՊԸ
հիմնադրամ	Ք. Երևան Միկոյան փ. 3շ 16բն
ՀՀ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	Էվոկաբանկ ՓԲԸ
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ Կամո մ/ճ	h/h 16600056260201 00
ՀՀ 16021100146800	ՀՎՀՀ 00908664
ՀՎՀՀ 08402753	տնօրեն Ն.Հարությունյան
ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան	/ստորագրություն/
Կ.Տ ստորագրություն	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«26» ապրիլի 2018թ. կնքված
«ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/06(1)» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
6	39836000	Ավել	ՀՀ ԱՁ Ռաֆայել Անանյան	սենյակային ավել, բնական հումքից, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում 350-500 գր., երկարությունը 85-90 սմ, ավլող մասի լայնքը 35-40 սմ:	հատ	678	67800	100	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	100	31/05/2018թ
14	39831244	Օճառ տնտեսական Բարֆ	Իրան Պակսան	Օճառ տնտեսական՝ 100գր., մուգ գույնի, խոնավակայուն, որակական թիվը (ճարպա-թթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար)՝ ոչ պակաս 78 գ, սոդայանյութերի զանգվածային մասը (վերահաշվարկված ըստ Na2O)՝ 0,2-ից ոչ ավելի, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ 36-41 0C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, փրփուրի նախնական ծավալը՝ 350 սմ3-ից ոչ պակաս, անվտանգությունը՝ Սան Պին 1.2.681-97:	հատ	125	12500	100	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	100	31/05/2018թ
15	39831210	Սպասք լվանալու հեղուկ Սոֆթ	ՀՀ Սոֆթ Թրեյդ ՍՊԸ	Լվացող մածուցիկ հեղուկ խոհանոցային սպասքը լվանալու համար, 500 գր, օգտագործված հոտավորիչի հոտով, գույնը[a] ըստ լվացող միջոցների գույնի որոշման սանդղակի, ջրածնային ցուցիչը (pH)[a] 9-10,5, մակերևութաակտիվ նյութի զանգվածային մասը[a] ոչ պակաս 18 %, ջրում չլուծվող նյութերի զանգվածային մասը[a] ոչ ավելի 3 %, խոնավության զանգվածային մասը[a] ոչ ավելի 50 %, չափածրարված պոլիմերային տարաներում[a] 0.5կգ-ոց զանգվածով: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված 'Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական	հատ	248	37200	150	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	150	31/05/2018թ

				կանոնակարգի:							
18	33761100	Թուղթ Սիլկ Սոֆթ	ՀՀ Սոֆթ Թրեյդ ՍՊԸ	Զուգարանի երկշերտ թուղթ, (8 հատանոց կապով), երկշերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի":	հատ	95	7600	80	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	80	31/05/2018թ
21	39831242	Լվացքի փոշի՝ ձեռքի Բարֆ	Իրան Պակսան	Լվացքի փոշի 0,400 կգ Բարֆ, ձեռքով լվացքի համար, սպիտակ, բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի: Փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն:	տուփ	344	41280	120	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	120	31/05/2018թ
23	44521170	Կողպեք EXTRA	ՉԺՀ Extra industral LTD	երկաթյա, կախովի լայնությունը 8-10 սմ, բարձրությունը 10-12 սմ, այդ թվում բացվող մասը՝ 5-6 սմ, կիսալուսնաձև 4 հուսալի բանալիներով:	հատ	2345	11725	5	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	5	31/05/2018թ
25	31686000	Էլ. Խրոց EKF	EKF OOO	Էլ. Խրոց/вилка/, հոսանքի սարքավորման համար, եվրո, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000Mom, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 300C-ից մինչև +800C, սպիտակ կամ կաթնագույն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված <Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի> համաձայն: «Մակել» կամ համարժեք:	հատ	234	4680	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	31/05/2018թ
29	39513200	Անձեռոցիկ Սիլկ Սոֆթ	ՀՀ Սոֆթ Թրեյդ ՍՊԸ	Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, տարբեր չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարա-հիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկա-կան կանոնակարգի":	տուփ	115	40250	350	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	350	31/05/2018թ
32	39831271	Սպունգ՝ սանիտարահ	ՉԺՀ Acord LTD	Սպունգ երկողմանի կոշտ, Սանիտարահիգիենիկ նշանակության, սինթետիկ, ուղղանկյուն, (15x20) սմ չափի, հաստությունը՝ 3 սմ կամ այլ չափերի:	հատ	123	12300	100	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան	100	31/05/2018թ

		իգենիկ ACORD							1		
34	24311370	Ժավել/ նատրիումի հիպոքլորիդ	ՀՀ Սոֆթ Թրեյդ ՍՊԸ	Սպիտակեցնող և ախտահանող հեղուկ՝ նատրիումի հիդրոքլորիդ (Ժավել), դեղնականաչավուն հեղուկ, քլորի հոտով, ակտիվ քլորի զանգվածային մասը՝ 90-100 գրամ/ լիտր, 1.0 լիտրանոց պլաստմասայե տարաներով	լիտր	123	14760	120	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	120	31/05/2018թ
36	39831243	Լվացքի փոշի ավտոմատ Բարֆ	Իրան Պակսան	Լվացքի փոշի 0,45 կգ Բարֆ ավտոմատ, բաղադրությունը՝ - մինչև 5% պոլիկարբոք-սիլներ պարունակող կատրիոնային արտաքին ակտիվ նյութերից (ԱԱՆ), 5-15 % թթվածին պարունակող սպիտակեցնող նյութերից, 15-30 % -անիոնային ԱԱՆ, ֆոսֆատներ, էնզիմներ, օպտիկական սպիտակեցնող նյութերից: Հոտը՝ ըստ կիրառված հոտավորիչի, բուտիլֆենիլմեթիլպրոպան, լինալոլ:	տուփ	456	13680	30	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	30	31/05/2018թ
38	39831241	Ձեռքի օճառ Սոֆթ	ՀՀ Սոֆթ Թրեյդ ՍՊԸ	Ձեռքի օճառ 100 գր-ոց՝ չորսուների, կտորների և այլ ձևերով, հոտավետ, խոնավակայուն, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ «Ձեզոք» և «Էքստրա» տեսակների համար 78 գ, «Մանկական» և «Սովորական» տեսակների համար 74 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ «Ձեզոք» տեսակի համար բացակայում է, «Էքստրա» տեսակի համար՝ 0,2 %, «Մանկական» տեսակի համար՝ 0,15 %, «Սովորական» տեսակի համար՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) °C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմե-տիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը:	հատ	123	36900	300	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	300	31/05/2018թ
39	39831282	Կահույքի մաքրման լաթ BOOB	ՁԺՀ Tsxotel LTD	Մաքրման շոր 38*30սմ, 5 հատանոց:	հատ	268	5360	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	31/05/2018թ
41	31651100	Մեկուսիչ ժապավեն Vini tape	ՁԺՀ Nianie LTD	Մեկուսիչ պոլիմերային ժապավեն, իզոլենտ, հոսանքի լարերի մեկուսացման համար տարբեր երկարության և լայնության գլանափաթեթներով:	հատ	135	1350	10	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	10	31/05/2018թ
45	31531210	Էլեկտրալամպ 100 W Kalashnikov	Ռ Դ KLZ ՕՕՕ	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված: Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի:	հատ	95	2850	30	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	30	31/05/2018թ
47	39513200	Անձեռոցիկ Սիլկ Սոֆթ	ՀՀ Սոֆթ Թրեյդ	Անձեռոցիկ սեղանի՝ եռաշերտ, 24x24 սմ չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 25 գ, խոնավությունը՝ 7,0 %, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ	փաթեթ	157	7850	50	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան	50	31/05/2018թ

					ՍՊՀ	հասարակական գիտությունների և մանկավարժական գիտությունների ինստիտուտ	Լեոնիդ Ալեքսանդրի Գևորգյան	
						գիտական աստիճանի հավակնորդի անունը, ազգանունը		1

*Սահմանի գծագրությունը գծագրությունը, իսկ գծագրությունը գծագրությունը, ինչպես նաև գծագրությունը գծագրությունը հաստատվում է գծագրության հեղինակի ստորագրությամբ և գծագրության հեղինակի կնիքով։ Գծագրությունը գծագրությունը կարելի է կատարել գրիչով, գրաֆիտե մատիտով, գունավոր մատիտով, գունավոր գրիչով, գունավոր մատիտով, գրաֆիտե

Հավելված N 2
«26» ապրիլի 2018թ. կնքված
«ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/06(1)» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
6	39836000	Ավել					67800								67800
14	39831244	Օճառ տնտեսական Բարֆ					12500								12500
15	39831210	Սպասք լվանալու հեղուկ Սոֆթ					37200								37200
18	33761100	Թուղթ Սիլկ Սոֆթ					7600								7600
21	39831242	Լվացքի փոշի՝ ձեռքի Բարֆ					41280								41280
23	44521170	Կողպեք EXTRA					11725								11725
25	31686000	Էլ. խրոց EKF					4680								4680
29	39513200	Անձեռոցիկ Սիլկ Սոֆթ					40250								40250
32	39831271	Սպունգ՝սանիտարա-հիգենիկ ACORD					12300								12300
34	24311370	Ժավել/ նատրիումի հիպոքլորիդ					14760								14760
36	39831243	Լվացքի փոշի ավտոմատ Բարֆ					13680								13680
38	39831241	Ձեռքի օճառ Սոֆթ					36900								36900
39	39831282	Կահույքի մաքրման լաթ BOOB					5360								5360
41	31651100	Մեկուսիչ ժապավեն Vini tape					1350								1350
45	31531210	Էլեկտրալամպ 100 W Kalashnikov					2850								2850
47	39513200	Անձեռոցիկ Սիլկ Սոֆթ					7850								7850

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ